«ԿԵՆԱՑ ԾԱՌ» ՏԱԹԵՎՈՒՄ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳՈՒ ՀԻՄՆՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԾԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ



Կարևորելով Ռուբեն Վարդանյանի նախագծերի և նրա բարեգործական առաքելության շարունակականությունը՝ «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունն սկսում է Տաթևում նոր պտղատու այգու հիմնման բարեգործական նախաձեռնությունը: Ծառատունկն ու կանաչ գոտու ստեղծումն իրականացվում է Տաթևի վանքին և «ՏԱԹԵՎԵՐ» ճոպանուղուն հարակից տարածքում:

Այգին կդառնա կյանքի և նոր սկզբի, իր ժողովրդի ու հայրենիքի բարգավաճման գործում Ռուբեն Վարդանյանի ունեցած ավանդի խորհրդանիշ, իսկ յուրաքանչյուր ծառ կարտահայտի նախագծի մասնակիցների զորակցությունը Ռուբեն Վարդանյանին և Ադրբեջանում ապօրինի պահվող մեր մյուս հայրենակիցներին:

Նոր այգում նախատեսվում է տնկել 1 000 ծառ, այդ թվում խնձորենի, տանձենի, կեռասենի և սալորենի:

Ծառատունկը մեկնարկել է ապրիլի 7-ին և շարունակվելու է ապրիլ ամսվա ընթացքում, իսկ մայիսին տեղի կունենա այգու բացման հանդիսավոր արարողությունը: Միջոցառման շրջանակում կտնկվի խորհրդանշական **«Կենաց ծառը»՝** սոսին (չինար, տնջրի) որը հայերի համար սրբազան ծառ է և խորհրդանշում է տոկունություն, գթասրտություն, վեհանձնություն ու երկարակեցություն և որի հետ կապված հայոց պատմության մեջ շատ ավանդույթներ կան:

ՆՊԱՏԱԿ — 30 000 ԱՄՆ ԴՈԼԱՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համագործակիցներ	**«Տաթևեր» ճոպանուղի, «Տաթեվի վերածնունդ» հիմնադրամ**
Աշխարհագրություն	**Սյունիքի մարզ, Տաթև համայնք**
Իրականացման ժամկետ	**Ապրիլ-մայիս, 2024թ.**

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԳԾԻՆ

- **Տնկել ծառ (ծառի տնկման վկայագրի արժեքը՝ 25 դոլար)**
- **Աջակցել նախագծին**

Նախագծի շրջանակում հավաքված ողջ միջոցները կուղղվեն Տաթև համայնքի զարգացմանը:

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Այգին ոռոգվելու է կաթիլային եղանակով և պահպանվելու է «Տաթևեր» ճոպանուղու թիմի ջանքերով՝ տեղի բնակիչների ներգրավմամբ: Հետագայում, այգու ծառերի բերքի օգտագործմամբ, նախատեսվում է հիմնել սոցիալական ուղղվածության փոքր արտադրություն: